Կարծիք

Մարի Եսայի Ստեփանյանի «Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և դրա բարձրացման ուղղությունները (ՀՀ առևտրային բանկերի նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ներկայացված ատենախոսության թեման, որը վերաբերում է մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությանը և դրա բարձրացման ուղղություններին մասնավորապես բանկային համակարգում, խիստ արդիական է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին, մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և դրանց որակական բարելավումը վաղուց դարձել են աշխարհի զարգացած երկրների տնտեսության և եկամուտների աճի կարևորագույն գործոն: Երկրորդ, բիզնեսի հաջողությունը որևէ ոլորտում, այդ թվում բանկային համակարգում պայմանավորված է մարդկային ռեսուրսների և ռիսկերի արդյունա-վետ կառավարմամբ:

Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսացել ՀՀ ֆինանսական շուկայում գործող բանկերի մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) համակարգի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա դրա արդյունավետության բարձրացման ուղղությունների մշակումը:

Այդ նպատակով հեղինակի կողմից օգտագործվել են տեղական և արտասահմանյան գիտական աղբյուրներ, ուսումնասիրվել է մարդկային ռեսուրսների կառավարումը կարգավորող օրենսդրական դաշտը, ինչպես նաև

ուսումնասիրվել են վիճակագրական տվյալներ և համացանցային տեղեկատվական աղբյուրներ:

Ողջունելի է ատենախոսի կողմից մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատման միջազգային փորձի համեմատական վերլուծությունը:

Հետազոտության հիման վրա ստացվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ հիմնական արդյունքները.

1. Մշակվել են ՀՀ առևտրային բանկերի գործունեության վրա մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի ազդեցության գնահատման նոր սկզբունքներ և փոփոխականներ:

2. Մշակվել և գործարկվել է բանկերի գործունեության արդյունքների վրա մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի ազդեցության գնահատման տնտեսամաթեմատիկական մոդել:

3. Բացահայտվել են բանկերի գործունեության վրա առավելագույն ազդեցություն գործող ՄՌԿ համակարգի ցուցանիշներ, որի հիման վրա մշակվել են գործնական առաջարկություններ ՀՀ առևտրային բանկերում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավման վերաբերյալ:

Հատկապես արժեքավոր են տնտեսամաթեմատիկական մոդելի մշակումը, որը թույլ է տալիս գնահատել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բազմակողմանի ազդեցությունը բանկերի գործունեության վրա, ինչպես նաև երկրորդ փուլում այդ մոդելի գործարկումը ՀՀ առևտրային բանկերում:

Փաստորեն, հետազոտության արդյունքում մշակված առաջարկությունները ունեն գործնական կիրառման հնարավորություններ հանրապետության բանկային համակարգում:

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև թերություններից և բացթողումներից.

1. Կարծում ենք, որ չորրորդ նորույթի առաջին մասը, որը վերաբերում է բանկերի ֆինանսատնտեսական արդյունքների և ՄՌԿ համակարգի արդյունավետության միջև դրական կորելյացիոն կախվածության բացահայտմանը, հարաբերականորեն կարելի է նորույթ համարել, քանի որ դեռևս 2000-ական թվականների սկզբից առկա են բազմաթիվ միջազգային հետազոտություններ (Moideenkutty, 2011, Jain & Gupta, 2012, Atteya, 2012 և մյուսներ), որտեղ էմպիրիկ վերլուծությունների հիման վրա ապացուցվել է դրական կապը մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի և կազմակերպության գործունեության արդյունավետության միջև:

2. Թեև 2-րդ գլուխը նվիրված է ՄՌԿ համակարգի առանձնահատկությունների վերլուծությանը ՀՀ բանկային համակարգում, սակայն անդրադարձ չի կատարվել բանկային մասնագետների պահանջարկի հաշվարկին և պլանավորմանը աշխատատեղերի վերլուծության հիման վրա, ինչպես նաև առևտրային բանկերում աշխատողների վարձատրության համակարգին: Նամանավանդ, որ ատենախոսի կողմից նշվում է ՀՀ բանկային ոլորտում արդարացի վարձատրության համակարգի բացակայությունը, այդ թվում նաև աշխատավարձի բևեռացման բարձր մակարդակի պատճառով: Շեշտը դրվել է հիմնականում աշխատակիցներին տրամադրվող սոցիալական արտոնություններին և դրա կառուցվածքին:

3. Ատենախոսության մեջ տարբեր ցուցանիշներ են ուսումնասիրվում, այդ թվում բանկերի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները 2013-2017թթ., մինչդեռ այդ վերլուծությունը ամբողջական կլիներ, եթե ընդգրկեր նաև 2017-2019թթ. ժամանակաշրջանը: Աշխատանքի էջ 69-70-ում ներկայացվել է ՀՀ բանկային

աշխատակիցների քանակական կազմի դինամիկան 2015-2017թթ.: Վերլուծությունը ակնհայտորեն ցույց է տվել, որ բանկային մասնագետների տեսակարար կշիռը դիտարկված ժամանակահատվածում նվազել է, միաժամանակ, աճել է ծառայողների թվաքանակը: Մինչդեռ, ինչպես նշում է ատենախոսը, բանկային մասնագետների պահանջարկը մշտապես եղել է և կլինի բարձր: Ըստ երևույթին, անհրաժեշտ էր ավելի խորը վերլուծություն կատարել բացահայտելու համար մասնագետների թվաքանակի նվազման պատճառները և նրանց համալրման ուղիները:

4. Կարծում ենք, որ առաջարկված մոդելի փորձարկման հիման վրա կատարված որոշ եզրակացություններ բազմակողմանի վերլուծության կարիք ունեն, այդ թվում, օրինակ, օտարերկրյա կապիտալով գործող բանկերում մարդկային ռեսուրսների կառավարման ավելի բարձր արդյունավետությունը զուտ հայկական կապիտալով գործող բանկերի համեմատ (էջ 118), ներառյալ ռազմավարական կառավարումը, վարձատրության համակարգը և այլն: Ինչպես նաև մարդկային կապիտալում կատարված ներդրումների շահութաբերության վրա ՄՌԿ համակարգի նորաստեղծության թույլ ազդեցությունը գործառույթների իրականացման որակի համեմատ: Մինչդեռ վաղուց ապացուցված է, որ նորարարությունների ներդրումն է զարգացած և մյուս երկրների տնտեսական աճի կարևոր գործոններից մեկը:

5. Աշխատանքում նաև առկա են ոճաբանական սխալներ և տեխնիկական վրիպակներ, որոնք չեն ստվերում աշխատանքի արժանիքները:

Վերընշված թերությունների և բացթողումների հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, ատենախոսությունը գիտական հետաքրքրություն ներկայացնող ավարտուն հետազոտություն է: Աշխատության մի շարք առաջարկությունների գործնական

կիրառումը կարող է նպաստել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հեղինակի կողմից հրատարակված գիտական աշխատությունները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Մ.Ե.Ստեփանյանի «Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և դրա բարձրացման ուղղությունները (ՀՀ առևտրային բանկերի նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի
աշխատանքի տնտեսագիտության
ամբիոնի վարիչ, պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր Ա.Ս.Մելքումյան

պրոֆեսոր Ա.Ս.Մելքումյանի ստորագրությունը հաստատում եմ:
09.11.2020

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ա.Ղեմ Ա.Ղ. Ղարագեզյան